ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 02

ք.Երևան «20» 12 2021թ.

Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի, որը գործում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պետական մարմին), մի կողմից, և «Հայավտոկայարան» ՓԲԸ-ն՝ ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Հայկ Մարիկյանի, որը գործում է «Հայավտոկայարան» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կազմակերպություն), մյուս կողմից, հիմք ընդունելով 2021թ. դեկտեմբերի 16-ի թիվ 2090-Ն որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2090-Ն որոշման համաձայն COVID-19-ով պայմանավորված՝ «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության նախորդ ամիսներին առաջացած պարտքերի մարման նպատակով 53,579.8 հազ. դրամ դրամաշնորհային գումարը, որն իր մեջ ներառում է նաև ԱԱՀ-ը, հատկացնում է Կազմակերպությանը:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Պետական մարմինը պարտավորվում է Կազմակերպությանը տրամադրել սույն պայմանագրի 1.1 կետում նշված դրամական միջոցները՝ վերջինիս կողմից միջոցների տրամադրման հայտն ընդունելուց առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Դրամական միջոցները հանձնվում են Կազմակերպությանը անկանխիկ՝ ՀՀ կենտրոնական գանձապետարանում բացված նրա բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.2. Պետական մարմնի կողմից տրամադրված դրամաշնորհի գումարը կամ դրա մի մասը ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 16-ի թիվ 2090-Ն որոշմամբ սահմանված նշանակությանն անհամապատասխան կամ ոչ նպատակային օգտագործման դեպքում կատարվում է դրամաշնորհի գումարի հետգանձում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3. Սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը իրականացնում է որոշմամբ նախատեսված COVID-19-ով պայմանավորված՝ «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության նախորդ ամիսներին առաջացած պարտքերի մարման գործընթաց:

2.4. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեության:

2.5. Կազմակերպությունը պարտավոր է.

2.5.1. Սույն պայմանագրի 1-ին կետով սահմանված դրամական միջոցները ծախսել ՀՀ կառավարության 2021թ. դեկտեմբերի 16-ի թիվ 2090-Ն որոշմամբ նախատեսված նպատակներին համապատասխան:

2.5.2. Վարել տրամադրված դրամական միջոցների օգտագործման բոլոր գործառնությունների առանձնացված հաշվառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.5.3. Սույն պայմանագրի շրջանակներում Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն:

2.5.4. Կազմակերպությունը պարտավոր է 2021թ. դեկտեմբերի 25-ի դրությամբ նախատեսված նպատակներով չօգտագործված գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

2.5.5. Կազմակերպությունը պարտավոր է մինչև 2022թ. հունվարի 31-ը սահմանված կարգով Պետական մարմնին ներկայացնել տեղեկատվություն պայմանագրի շրջանակներում հաշվարկված և ՀՀ պետական բյուջե վճարված ԱԱՀ-ի գումարների, ինչպես նաև ծրագրի իրականացման արդյունքներով չօգտագործված և պետական բյուջե վերադարձված գումարների մասին:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4. Այլ պայմաններ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

4.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.3. Սույն պայմանագրի փոփոխություններդը և լրացումները կատարվում են կողմերի ստորագրությամբ՝ գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով:

4.4. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են պայմանագրի կնքման պահին գործող ՀՀ օրենսդրության պահանջները:

5. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմնին	**Կազմակերպություն**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ք.Երևան, Հանրապետության հր. Պտղնի, Կառավարական տուն 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011035103 ՀՎՀՀ՝ 02815457	«Հայավտոկայարան» ՓԲԸ Կոտայքի մարզ, գյուղ Վերին Երևան-Սևան մայրուղի 2/14 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018007840 ՀՎՀՀ՝ 01802225
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար	«Հայավտոկայարան» ՓԲԸ գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ (ստորագրություն)	_____ Հ. ՄԱՐԻԿՅԱՆ (ստորագրություն)